



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության  
ՁԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչ

**Հայաստանի Հանրապետության  
Հեռարձակման մասին օրենքում նախատեսվող  
փոփոխությունների և Ռադիոհեռուստատեսային  
հեռարձակման թվային համակարգին անցման  
հայեցակարգի վերլուծության (2010թ. մարտ և մայիս)  
վերաբերյալ՝ ՁԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ  
ներկայացուցչի գրասենյակի կողմից արված  
դիտողությունների  
լրացում**

Այս վերլուծությունը կատարել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական  
համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի Լրատվության իրավունքի և  
քաղաքականության կենտրոնի տնօրեն դոկտոր Անդրեյ Ռիխտերը, որը դասախոս է և  
նույն համալսարանի լրատվության իրավունքի ամբիոնի վարիչը, Իրավագետների  
միջազգային հանձնաժողովի (ICJ) անդամ և Լրատվության և հաղորդակցության  
հետազոտությունների միջազգային ընկերակցության (IAMCR) իրավունքի բաժնի  
համանախագահը

10-հունիսի 2010թ.

Սույն վերլուծության առարկա հանդիսացող հեռարձակման մասին օրենքը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (այսուհետև՝ օրենք) և ընդունվել է երկրորդ ընթերցմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2010թ հունիսի 10-ին:

### ***Առաջին ընթերցումից հետո կատարված հիմնական փոփոխությունները***

1.1) Օրենքի 22-րդ հոդվածը («Հեռուստառադիոհաղորդումների չարաչափման անթույլատրելիությունը») սահմանում է այն հաղորդումների և դրանց բաղադրիչների ցանկը, որոնք հեռարձակվելու դեպքում կհանգեցնեն լիցենզիայի գործողության ժամկետի դադարեցման: Այժմ սա տեղի է ունենում ոչ թե ՀՌԱՀ-ի ուղղակի հայեցողությամբ, այլ դատական կարգով՝ 22-րդ հոդվածի առաջին իսկ խախտման դեպքում, ՀՌԱՀ-ի դիմումի հիման վրա (61-րդ հոդված): Կարծում ենք, որ այս փոփոխությունը բավարար չէ, քանի որ այս դրույթն ամեն դեպքում հանգեցնում է ինքնագրաքննության և լրատվամիջոցների ազատության սահմանափակումների: Դատարանը պետք է հետևի օրենքի դրույթներին, մինչդեռ օրենքի դրույթներն այստեղ չափազանց հեռու են ԵԱՀԿ-ի ժողովրդավարական չափորոշիչներից:

2) Մինչ դրական է այն, որ օրենքի 22-րդ հոդվածը կրճատվել է և այժմ չի պարունակում «օրենքով պահպանվող պետական կամ այլ գաղտնիքներ հրապարակելու... և բռնության և դաժանության պաշտամունք, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող հաղորդումներ հեռարձակելու» մասին դրույթներ, դեռևս մնացել են դրույթներ, օրինակ, «զրպարտության, այլ անձանց իրավունքները, աննեղության կանխավարկածը խախտելու» մասին: Մենք տեղյակ չենք ժամանակակից ժողովրդավարական աշխարհում որևէ այլ երկրի մասին, որտեղ զրպարտությունը կարող է հանգեցնել վարչական մարմնի որոշմամբ հեռարձակողի գործունեության դադարեցմանը:

3) Նույնը վերաբերում է այլ անձանց այնպիսի իրավունքների խախտմանը, ինչպիսիք են ոտնձգությունները նրանց անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ կամ հեղինակային իրավունքի խախտումները. սրանք թույլ հիմքեր են հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետի դադարեցման համար:

4) Դրույթը, որը նույն կերպ պատժում է «քրեորեն պատժելի արարքների կամ օրենդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը» չափազանց լայն է և հեռարձակողների համար մահապատիժ նախատեսող հանցագործության հավասար է դարձնում այնպիսի իրավախախտումների կոչերը, ինչպիսին որ մեքենան անթույլատրելի տեղում կանգնեցնելն է:

5) Նույնատիպ տույժը «պոռնկագրական նյութերի տարածման» համար շատ ավելի խնդրահարույց է: ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պոռնկագրական նյութեր կամ առարկաներ, այդ թվում՝ տպագիր հրատարակություններ, կինոյի և տեսաֆիլմերի նյութեր, պատկերներ կամ պոռնկագրական բնույթի այլ առարկաներ ապօրինի տարածելը, գովազդելը, իրացնելը, ինչպես նաև այդ նպատակով պատրաստելը»<sup>1</sup>

<sup>1</sup> Տես <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349&lang=eng>

հանցագործություն է: Այսպիսով՝ օրենսգրքի ձևակերպումից ենթադրվում է, որ «ապօրինի պոռնկագրությունից» գատ կա նաև «օրինական պոռնկագրություն»: Քանի դեռ Հայաստանի գործող օրենսդրության մեջ չկա «ապօրինի պոռնկագրության» հստակ սահմանում (ինչպիսիք են այդ նույն 263-րդ հոդվածի 2-րդ մասի նեղ թվարկումը), մնացած տիպի բոլոր պոռնկագրական նյութերն օրինական են: Սա կասկածելի է դարձնում օրենքի բացարձակ իրավական արգելքը:

6) Բռնության և դաժանության պաշտամունք պարունակող կամ քարոզող հաղորդումների հեռարձկման արգելքը չափազանց լայն է դատարանում գործնական կիրառություն գտնելու համար և դարձյալ կամայական որոշումների հնարավորություն է բացում:

7) Նույնը կարելի է ասել նաև անմեղության կանխավարկածի մասին: Սահմանադրության թեմայով վեճն այս վերլուծության շրջանակներից դուրս է, սակայն մեր խորին համոզմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 21-րդ հոդվածը, որն ամրագրում է (1-ին մասում), որ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով» որևէ կերպ չի առնչվում զանգվածային լրատվամիջոցների ոլորտին<sup>2</sup>: Անմեղության կանխավարկածի այս սահմանադրական սահմանումը չի վերաբերում լրագրողներին կամ լրատվամիջոցներին, քանի որ նրանք չեն կարող «մեղադրել» որևէ մեկին բառիս իրավական իմաստով (մինչդեռ կասկած չկա, որ Սահմանադրությունն իրավական փաստաթուղթ է): Ամեն դեպքում, օրինագծի 22-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում անմեղության կանխավարկած հասկացության կամայական կիրառության համար, ինչը կարող է լուրջ հետևանքներ ունենալ լրատվամիջոցների համար:

Հետևաբար, մեր առաջարկությունը մնում է նույնը.

- *Վերացնել արտահայտվելու և լրատվամիջոցների ազատությունը կամայականորեն սահմանափակելու հնարավորությունը հեռարձակողների կողմից 22-րդ հոդվածով նախատեսված խախտումների դեպքում:*
- *Սա պետք է ներառի նաև լրագրողների ինքնագրաքննության հնարավորությունների վերացումը՝ հաշվի առնելով հեռարձակողների խորը և անարգել զտումները 22-րդ հոդվածի այնպիսի խախտումների համար, ինչպիսիք են զրպարտությունը, այլ անձանց իավունքների խախտումը և այլն:*

2. Ողջունելի է այն դրույթի նախատեսումը, որի համաձայն՝ «Ազգային հանձնաժողովը տարին մեկ անգամ հրապարակում է եթերային հաճախականությունների ամբողջական ցանկը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից կազմված և պարբերաբար իրեն տրամադրվող Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված եթերային հաճախականությունների ցանկը» (36-րդ հոդվածի 6-րդ մաս): Այս կերպ մեր այն առաջարկությունը, որ պետք է *պահպանել հաճախականությունների պլանը Ազգային հանձնաժողովի կողմից հրապարակելու պարտականությունը* կատարված է:

3. Ողջունելի է, որ օրենքի 49-րդ հոդվածը ներառում է Ազգային հանձնաժողովի այն պարտականությունը, որ լիցենզավորման գործընթացում վերջինս պետք է հաշվի առնի

<sup>2</sup> Տես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության Նախագահին առնթեր Տեղեկատվական վեճերի դատական պալատի առաջարկությունները (անգլերեն), No. 3 (10), 24-ը դեկտեմբերի, 1997թ. «Անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառումը լրագրողական գործունեության ընթացքում», (ի պատասխան Լրատվամիջոցների իրավունքի և քաղաքականության կենտրոնի հարցման), [http://medialaw.ru/e\\_pages/laws/russian/jcr-10-97.htm](http://medialaw.ru/e_pages/laws/russian/jcr-10-97.htm)

դիմողի՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը: Մինչույն ժամանակ, *ՀԱԿ-ի՝ եթերում բազմակարծություն խթանելու պատասխանատվությունը վերստին նախատեսելու մասին* մեր առաջարկությունը, փոխարենը, վերաբերում էր օրինագծի այլ մասի, 36-րդ հոդվածին («Ազգային հանձնաժողովի գործառույթները»):

4. Մեր նախնական առաջարկության ձևակերպումը հետևյալն էր. «*Վերստին նախատեսել այն դրույթը, որի համաձայն Ազգային հանձնաժողովը պարտավոր է պատշաճորեն հիմնավորել հեռարձակման լիցենզիա տրամադրելու մերժման մասին իր որոշումը*»: Քննարկումներից հետո ընդունված օրենքում տեղ է գտել հետևյալ ձևակերպումը. «Ազգային հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատշաճ հիմնավորված և պատճառաբանված: Ազգային հանձնաժողովը ապահովում է իր որոշման հրապարակայնությունը»: Կարծում ենք, որ սա նշանակում է, որ Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճորեն հիմնավորի և պատճառաբանի լիցենզիայի տրամադրման և լիցենզիայի մերժման մասին իր որոշումները: Եթե դա այդպես է, սա շատ ողջունելի փոփոխություն է և համապատասխանում է լիցենզավորմանը վերաբերող ընդդեմ Հայաստանի հայտնի գործով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը.

*«Ղատարանը գտնում է, որ լիցենզավորման այնպիսի ընթացակարգը, որի պարագայում լիցենզավորման մարմինը չի հիմնավորում իր որոշումը, բավարար պաշտպանություն չի ապահովում արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի նկատմամբ պետական մարմնի կամայական միջամտությունների դեմ»<sup>3</sup>:*

5. 8-րդ հոդվածով նախատեսվում է, որ «Հեռուստառադիոընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռոդիոալիքով) չի կարող ամսական ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս լինել»: Նախորդ տարբերակում՝ «չի կարող ...65 տոկոսից պակաս լինել»: 65-ից կրճատումը մինչև 55-ի կիջեցնի հեռարձակողների՝ հայրենական արտադրության հաղորդումներ ստեղծելու (պատվիրելու) հետ կապված տնտեսական լարումը, սակայն այս միջոցառումը դեռևս ծայրահեղ է: Նույնիսկ արևմտաեվրոպական երկրներում, որտեղ տնտեսությունը, այդ թվում՝ հեռարձակման տնտեսությունը շատ ավելի հզոր է, քանի Հայաստանում, օրենքը չի պահանջում հեռարձակել 50 տոկոսից ավելի հայրենական արտադրության (կամ, ավելի ճիշտ, եվրոպական արտադրության) հաղորդումներ, և նույնիսկ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հունաստանը և Իսպանիան դեռևս չեն կարողանում հասնել այդ նպատակին: Չարմանալի չէ այն, որ «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» եվրոպական կոնվենցիան այս առնչությամբ ամրագրում է (10-րդ հոդվածի 1-ին մաս՝ *Մշակութային նպատակներ*).

*«Յուրաքանչյուր հեռարձակող կողմ ապահովում է, եթե գործնականում հնարավոր է և կան համապատասխան միջոցներ, որ իր իրավագարության ներքո գտնվող հեռարձակողը եվրոպական հաղորդումներին հատկացնի իր հեռարձակման ժամանակի մեծ մասը, բացի այն ժամանակից, որը հատկացվում է լուրերի, սպորտային իրադարձությունների, խաղերի, գովազդի, հեռուստատեսության և հեռուստազնունների ծառայություններին: Այս համամասնությունը պետք է հասնել աստիճանաբար, համապատասխան չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով հեռարձակողի տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային պարտականություններն իր հեռուստադիտողների/ունկնդիրների հանդեպ»:*

---

<sup>3</sup> Տես «Մելտեքս» ՄՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 68-րդ պարբերությունը, (*Դիմում թիվ 32283/04*) 17-ը հունիսի, 2008թ.  
<http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbk&Action=html&highlight=ARMENIA%20%2010&sessionid=67430&skin=hudoc-en>

## **Առաջարկություն**

- Քննարկել մասնավոր հեռարձակողների համար հայրենական արտադրության հաղորդումների քվոտայի վերացման հարցը:

6. Դրական քայլերից է նաև օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի վերախմբագրումը՝ ապահովելու, որ «հովանավորություն» հասկացության սահմանումը համապատասխանի «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» եվրոպական կոնվենցիայի սահմանմանը (2-րդ հոդվածի «ը» կետ): Ընդհանուր առմամբ, օրենքի այս հոդվածը համապատասխանում է Կոնվենցիային: Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի որոշ դրույթներ ներառված չեն: Օրինակ՝ օրենքը չի նախատեսում, որ հովանավորվող հաղորդումները չպետք է խրախուսեն հովանավորի կամ երրորդ անձի ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, ձեռքբերումը կամ վարձակալությունը, մասնավորապես՝ իրենց հաղորդումներում այդ ապրանքներին կամ ծառայություններին հատուկ գովազդային հղումներ անելու միջոցով (Կոնվենցիա, 17-րդ հոդվածի 3-րդ մաս):

## **Առաջարկություն**

- Ընդունել հովանավորության և գովազդի կանոններ, որոնք գործում են եվրոպական երկրներում և տեղ են գտել «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» կոնվենցիայում:
- Քննարկել «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» եվրոպական կոնվենցիայի ստորագրման և վավերացման հարցը<sup>4</sup>

## **Այն հիմնական առաջարկությունները, որոնք հաշվի չեն առնվել օրենքում**

Մի շարք առաջարկություններ ընդհանրապես անտեսվել են և/կամ կապվել «ապագա օրենքի» կամ «ապագա փոփոխությունների հետ»: Դրանցից են.

- *Հստակ տարբերակում մտցնել արբանյակային, բջջային, ինտերնետային հեռարձակման և ոչ գծային տեսաձայնային ծառայությունների կարգավորման մասով:*
- *Դնել թվային հեռարձակման ոչ պետական օպերատորների ստեղծման իրավական հիմքերը:*
- *Նախատեսել կոնկրետ դրույթներ հանրապետական և մայրաքաղաքային մուլտիպլեքսերի ռադիո ծրագրերի թվի և թեմատիկ ուղղությունների վերաբերյալ:*
- *Փոխել Հանրային հեռուստատեսության և ռադիոյի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի՝ պետական բյուջեից ֆինանսավորման համակարգը՝ ապահովելու պետությունից նրանց անկախության ավտոմատ երաշխիքը:*
- *Բարեփոխել Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անդամների ընտրության և նշանակման կարգը՝ ապահովելու բազմակարծիք հանրային հեռարձակում:*

Օրինակ, 62-րդ հոդվածի 13-րդ մասն այժմ ամրագրում է, որ. «Մինչև 2015 թվականի հունվարի 1-ից իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանց ստեղծելու համար օրենքով կսահմանվեն մուլտիպլեքսորի լիցենզավորման կարգն ու պայմանները»: Այն հարցը, թե երբ պետք է այս կարևոր պայմանները սահմանվեն օրենքով

<sup>4</sup> Տես <http://conventions.coe.int/treaty/Commun/ChercheSig.asp?NT=132&CM=1&DF=&CL=ENG> Պետք է հաշվի առնել, որ մինչև մի շարք արևմտաեվրոպական երկրներ չեն ստորագրել կոնվենցիան, նրանք միացել են Եվրոպական Միությունում գործող վեջինիս համարժեք փաստաթղթին՝ Տեսաձայնային լրատվական ծառայությունների մասին հրահանգին:

կամ թե ինչու է դրանց սահմանումը հետաձգվում, հստակեցված չէ նախագծում կամ տեղեկանք-հիմնավորման մեջ:

Մինչ հասկանալի է, որ իրավական բարեփոխումները չեն կարող արվել մի քանի օրերի ընթացքում, և Կառավարությունը շտապում է ընդունել օրինագիծը նախքան լիցենզիաների մրցույթների կասեցման ժամկետի ավարտը, հարկ ենք համարում նշել, որ մեր առաջարկությունները քառսային չեն, այլ համակարգային և հետապնդում են օրինագիծը ԵԱՀԿ-ի չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակ: Հետևաբար, որոշ առաջարկություններ առանձնացնելն իմաստ չունի:

Օրինակ՝ իմաստ չունի հանրային հեռարձակողին դնել Խորհրդի բացառիկ իրավագործության ներքո (մեր առաջարկությանը համապատասխան), եթե Խորհուրդն ինքը չբարեփոխվի ժողովրդավարական եղանակով: Հետևաբար, մենք հորդորում ենք իշխանություններին քննության առնել այս բոլոր հարցերը միասին, և եթե օրինագիծը բարեփոխելու հետ կապված ձգձգումներն անխուսափելի են, ընդունել քաղաքականության փաստաթուղթ (policy paper), որը կոնկրետ և մոտ ապագայում կնախատեսի հիշյալ փոփոխությունները:

Անտեսվել են համարյա այն բոլոր առաջարկությունները, որոնք արվել էին դոկտոր Կատրին Նայման-Մեքքալֆի և դոկտոր Անդրեյ Ռիխտերի կողմից Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի առնչությամբ 2010թ. մարտին: Մինչդեռ հայեցակարգն էր, որ դնելու էր օրենքի հիմքերը:

#### *Առաջարկություն*

- *Ընդունել քաղաքականության փաստաթուղթ, որը կնախատեսի հստակ և մոտ ապագայում հեռարձակման մասին օրենքում փոփոխություններ կատարելու ժամանակացույց:*
- *Հրավիրել աշխատանքային խումբ, որտեղ ընգրկված կլինեն լրագրողական հասարակական կազմակերպություններ, խորհրդարանականներ և այլ շահագրգիռ կողմեր և աշխատել օրինագծի հիմնավոր լրամշակման վրա՝ լիարժեքորեն հաշվի առնելով գործող օրենքի և Թվային հեռուստառադիոհեռարձակման անցման հայեցակարգի առնչությամբ՝ աշխատանքային խմբի անդամների, միջազգային կազմակերպությունների և նրանց փորձագետների դիտողություններն ու առաջարկությունները:*

#### **Եզրահանգում**

ԵԱՀԿ-ի Լրատվամիջոցների ազատության ներկայացուցչի գրասենյակը շարունակաբար աջակցել է Հայաստանում հեռարձակման ոլորտը կարգավորող առավել ազատական օրենքի մշակման գործում, ինչին կմասնակցեին նաև հասարակական կազմակերպությունները և ինչը կխթաներ արտահայտվելու և լրատվամիջոցների ազատությունը Հայաստանում:

Օրենքի՝ առաջարկվող տարբերակն, այդուհանդերձ, կասկածներ է հարուցում այն մասին, որ հեռարձակման մասին օրենսդրությանը վերաբերող՝ ԵԱՀԿ-ի Լրատվամիջոցների ազատության ներկայացուցչի բազմաթիվ կոչերը պատշաճ կերպով են արտացոլվել քննարկմանը ներկայացված օրինագծում:

ԵԱՀԿ-ի Լրատվամիջոցների ազատության ներկայացուցչի գրասենյակը հորդորում է Ազգային ժողովի պատգամավորներին աշխատանքային խումբ հրավիրել, որտեղ ընգրկված կլինեն լրագրողական հասարակական կազմակերպությունները, ընդդիմադիր խորհրդարանականները և այլ շահագրգիռ կողմեր և աշխատել օրենքի հիմնավոր լրամշակման վրա՝ լիարժեքորեն հաշվի առնելով աշխատանքային խմբի անդամների, միջազգային կազմակերպությունների և նրանց փորձագետների դիտողություններն ու առաջարկությունները: Օրենքը պետք է ծառայի ոչ թե թվայնացման տեխնիկական պայմաններին կամ գործարար ու քաղաքական շահերին, այլ պետք է ապահովի արտահայտվելու և լրատվամիջոցների ազատությունը՝ ի շահ Հայաստանի հանրության:

